

ՎԱՍՆ ԻՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՅՈՒՍԱԴՐՈՂ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

(Խմբագրական «ԷՋՄԻԱՄԻՆ» ամսագրի, Բ. 2, 1977)

1977 թուականի Մայիսի 22-29 օրերին Անթիլիասում, Մեծի Տանն Կիլիկիայի Կաթողիկոսական Աթոռում, տեղի ունեցան աթոռակից-կաթողիկոսի ընտրություն, ձևանադրություն և օծման հանգիստությունները:

Այս առիթով Տ. Տ. Խորեն Ա. կաթողիկոսը, Ամենայն Հայոց Տ. Տ. Վաղգէն Ա. կաթողիկոսին ուղղելով Իր 23 Յունուար թուակիր պաշտօնական դրութեամբ, հրաւեր էր ուղարկում Մայր Աթոռ, «որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը մասնակցի սոյն ընտրութեան մէկ հոգեւորական և մէկ աշխարհական պատգամաւորներով՝ համաձայն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնադրութեան 12րդ յօդուածի տրամադրութեան»:

Ծանօթ են բոլորին 1956 թուականի Փետրուարից սկսած սփիւռքում մեր ազգային-եկեղեցական երկփեղկումի և տաղնապի պատմությունն ու նրա շարժառիթները:

Մայր Աթոռ տաղնապի պատճառով չմասնակցեց 1956 թուականի Փետրուարին լուսահոգի Տ. Տ. Զարեհ Ա. կաթողիկոսի և 1963 թուականի Մայիսին Տ. Տ. Խորեն Ա. Մեծի Տանն Կիլիկիայի կաթողիկոսական ընտրություններին:

Բոլորիս ծանօթ են դարձեալ, թէ 1956-1977 թուականների ընթացքում եկեղեցական այդ տաղնապի և ներքին միասնականութեան խախտման հետեւանքով ինչպիսի՜ խոր ցնցումներ և վերքեր ստացաւ մեր եկեղեցին ըսփիւռքում:

Անցնող քսան տարիների ընթացքում, սակայն, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը թէ՛ բանիւ և թէ՛ գործով, միշտ լաւատեսութեամբ, որքա՞ն ջանքեր թափեց այդ տաղնապի խաղաղ ու դրական լուծման համար և քանի՞-քանի՞ անգամներ սիրոյ և միութեան հայրական կոչեր, յորդորներ, հաշտութեան խաղաղասիրական առաջարկներ արեց:

1963 թուականի Հոկտեմբեր 26-ին Երուսաղէմի ողջադուրումով հայ եկեղեցու ներքին տաղնապը փարստուած տեսնելու Մայր Աթոռի և Հայոց Հայրապետի ուրախությունը նոյնպէս երկար չտևեց:

Այդ բոլորն այսօր անցեալի տխուր յուշ և պատմություն է:

Այդ տաղնապը պէտք է որ շարունակուի: Ստեղծուել են, բարեբախտաբար, յուսադրող նոր հեռանկարներ տաղնապի լուծման ճանապարհի վրայ: Ժամանակն է, որ վերականգնուի հայ եկեղեցու միությունն ու ներքին խաղաղությունը. «Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ» (Եփես. Դ 26): «Ահա օրն փրկութեան» (Բ Կորնթ. 2 2):

Այս եկեղեցուչէն եւ հանրագումար մտածումներէ յոյսի տակ Ամենայն Հայոց կաթողիկոսը 1977 թուականի Ապրիլի 26ին պատասխանում էր Տ. Տ. Խորէն Ա կաթողիկոսի Յունուար 23 թուակիր հրաւեր նամակին:

«Մենք սրտանց կ'ողջունենք Ձեր հրաւերը, անոր մէջ տեսնելով վեր-
յառնումը այն բարի ոգիին որ սկիզբ առած էր մեր միջեւ երուսաղէմ, մեր ող-
ջագոյությունի օրերում 1963ի Հոկտեմբերին:

Մենք կը հաւատանք նաեւ թէ Ձերդ Սրբութիւնը եւ ձեր ազգային-ե-
կեղեցական մարմինները խորհած է՛ք արդէն դիմել այն միջոցառումներուն,
որոնք օրինաւոր հնարաւորութիւնը պէտք է ստեղծեն նաեւ պարիւր բանալու
մեր ներկայացուցիչներու արժուակից-կաթողիկոսի ընտրութեան մասնակցու-
թեան, իրրեւ հրապարակային արտայայտութիւնը մեր երկու Արքուններու մի-
ջեւ Բսան տարիներէ ի վեր եղած անհասկացողութեանց վերացման:

Կը խորհիմք թէ, այս պահուն Մեզ եւ Ձեզ մտահոգողը եւ հետեւա-
բար՝ կարեւորը, հրամայականն ոչ թէ պարզապէս ձեւական մասնակցութիւնն
է Մայր Արքունի ներկայացուցիչներու Ձեր Արքունի Ազգային Ընդհանուր Ժո-
ղովին, այլ կարեւորն ու հրամայականն է վերացնել այն առարկայական պատ-
ճառները, որոնց հետեւանքը հանդիսացաւ այն տագնապալի վիճակը, որ ահա
կը գոյատեւէ Բսան եւ աւելի տարիներէ ի վեր ի ցաւ մեր բոլորիս սիրտերուն
եւ ի վնաս մեր սուրբ եկեղեցիին ու մեր ժողովուրդի հիմնական ու տեւական
շահերուն»:

*Հայրապետական սոյն նամակում նշում էր նաեւ, թէ «Մայր Արքուն
շատոնց ի վեր կը սպասէ համբերութեամբ եւ լաւատեսութեամբ վերացած
տեսնել սփռուածի մեր եկեղեցական տագնապին ծնունդ տուող պատճառները»,
մեր եկեղեցական իրաւասութեանց զարաւոր կանոնների եւ օրինականութեան
պահպանման յոյսի տակ, տապալ, որը ահա Բսան տարիներից ի վեր ճնշում
է Հայ Հոգիների վրայ:*

*Իր վերոյիշեալ նամակում Տ. Տ. Վաղգէն Ա Հայրապետը Ամենայն
Հայոց տապալը զործնականորէն եւ վերջնականապէս վերացած տեսնելու
լաւատեսութեամբ Տ. Տ. Խորէն Ա կաթողիկոսի ուշադրութեանն էր յանձնում
Մայր Աթոսի մասնակցութեան հետեւեալ պարագան.*

«Հետեւաբար, կը խորհիմք թէ, Մայր Արքունի ներկայացուցիչներու
մասնակցութիւնը հնարաւոր դարձնելու համար, անհրաժեշտ է որ Արքունիդ Ազ-
գային Ընդհանուր Ժողովը նախքան ընտրութեան անցնիլը, իր իշխանութեամբ
չեղեալ հոշակէ 32րդ եւ 33րդ յօդուածները ու նաեւ տրամադրութիւն յայտնէ
պատշաճ բանաձեւումով մը, որ արժուակից-կաթողիկոսի ընտրութենէն եւ օ-
ծումէն յետոյ, շուրջ մէկ տարուան ընթացքին՝ մեր Արքուններու միջեւ բա-
նակցութիւններու եւ փոխադարձ հասկացողութեանց նաեւ պարիւր, օրինա-
ւոր եւ բարոյք լուծում գտնեն նաեւ միւս հարցերը, որոնք Ձեզ ուղարկած էինք
1971ի Նոյեմբերին, Ձեր պաշտօնական ներկայացուցիչներու ձեռամբ, եւ զոր
կրկին Ձեր ուշադրութեան յանձնած էինք Մեր 14 Փետրուար 1972 նամակով,
հարցեր, որոնք կը կարօտին օրինական կարգաւորման, համաձայն մեր եկե-
ղեցոյ կարգ ու կանոնին:

Յիշեցման կարգով ներփակ Ձեզի վերստին կը ներկայացնենք այդ
հինգ հարցերը, բանաձեւուած Մեր կողմէ 12 Նոյեմբեր 1971ին»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սոյն պաշտօնական գրութիւնն անձամբ Անթիլիաս տարաւ Գերագոյն Հոգեւոր խորհրդի անդամ, Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական պատուիրակ եւ Յրանախայի Հայոց առաջնորդ Տ. Սերովրէ Արքեպ. Մանուկեանը, որ այդ օրերին ուխտաւորաբար գրանւում էր Մայր Աթոռում, Երուսաղէմի Հայոց Ամենապատիւ Տ. Եղիշէ սրբազան Պատրիարքի հետ :

Ապրիլի 27ին, չորեքշաբթի օրը, Անթիլիաս էր ժամանում Տ. Սերովրէ արքեպիսկոպոսը եւ անձամբ Հայոց Հայրապետի վերոյիշեալ նամակը յանձնում Տ. Տ. Խորէն Ա. կաթողիկոսին :

Մայիս 2 թուակիր նամակով Տ. Տ. Խորէն Ա. կաթողիկոսը պատասխանում էր Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի Ապրիլ 26 թուակիր նամակին՝ յայտնելով պաշտօնապէս, թէ «Անցնող Ազգային Ընդհանուր ժողովին մէջ կազմուած էր յանձնախումբ մը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կանոնները վերամշակելու համար: Նոյն ժողովին մէջ, ինչպէս նաեւ հետագային, ազգայիններու տրամադրութիւնները ամէն պատրաստակամութիւն ցոյց կուտային 32րդ եւ 33րդ յօդուածները կանոնագրէն դուրս ձգելու :

Այս հիման վրայ, առնելով Ս. Արքեպիսկոպոսներու, ազգային մարմիններու եւ պատասխանատու ազգայիններու կարծիքները, կրնանք հաւաստիացնել Ձեզ, թէ յառաջիկայ գումարուելիք Ազգային Ընդհանուր ժողովը վերոյիշեալ երկու յօդուածները պիտի վերցնէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կանոնադրութենէն» :

Տ. Տ. Խորէն կաթողիկոսի 2 Մայիս թուակիր սոյն պատասխան նամակը անձամբ Մայր Աթոռ է բերում Տ. Սերովրէ Արքեպ. Մանուկեանը, Մայիսի 7ին :

Երկու Աթոռների միջև վերջերս փոխանակուած պաշտօնական գրութիւնների լոյսի տակ եւ Տ. Սերովրէ արքեպիսկոպոսի՝ Գերագոյն Հոգեւոր խորհրդի 3 Մայիս նիստում, դէպի Անթիլիաս իր կատարած առաքելութեան մասին տուած զեկույցադրի հիման վրայ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահութեամբ գումարուած Գերագոյն Հոգեւոր խորհուրդը իր լիազուժար նիստում, որին հրաւիրուել էր նաեւ Տ. Եղիշէ Սրբազան Պատրիարք Հայրը, որոշում է ընդունում մասնակցել Անթիլիասում Մայիսի 22ին աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան եւ Մայիսի 29ին՝ օծման հանդիսութիւններին :

Գերագոյն Հոգեւոր խորհրդի սոյն նիստում Մայր Աթոռի երկու ներկայացուցիչներ են նշանակուում՝ Տ. Սերովրէ Արքեպ. Մանուկեանը եւ Անդրխայի Հայոց Հայրապետական պատուիրակ Տ. Ներսէս Եղս. Պօղոսյանը :

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Անթիլիասի հանդիսութիւններին Մայր Աթոռից երկու պատգամաւորներ ուղարկելու մասին 10 Մայիս պաշտօնական Իր գրութեամբ տեղեկացնում էր Տ. Տ. Խորէն Ա. կաթողիկոսին :

«Մեր սուրբ եկեղեցին՝ ներքին միութեան, օրինականութեան եւ իսլաւոյնութեան փառանքաւոր տանող նախապարհին վրայ, Մենք կը կամենանք հետեւողականօրէն մնալ լուստես, համոզուած ըլլալով թէ Ձեր վերոյիշեալ նամակին մէջ յստակօրէն արտայայտուած հաւաստիացումները կարճ ժամանակի մէջ կեանքի պիտի կոչուին, յայտնուովը Ձեր կանոնագրի 32րդ եւ 33րդ յօդուածներուն եւ օրինական կարգաւորումովը ծանօթ իննգ հարցերուն, բացակայութեանց եղանակաւ, հարցեր, որոնց ուրախ ենք որ կ'ակնարկէ նաեւ Ձերդ Սրբութիւնը Իր նոյն նամակին մէջ :

Ձեր հաւաստիացումները իրօք մխիթարեցին Մեր սիրտը, որոնց կենսագործումով կը հաւատանք քէ նոր էջ մը պիտի բացուի մեր Աքռներու յարաբերութեանց պատմութեան մէջ:

Կը հաւատանք քէ՝ Մեծի, Ձերդ Սրբութիւնը եւ նորընտիր Ձեր Աքռակից եղբայրը միասնաբար, սրբութեամբ եւ վնասկամութեամբ պիտի պահպանենք յետ աշտու կանոնը մեր եկեղեցւոյ նուիրապետական Աքռներու պատմականօրէն նուիրագործուած իրաւասութեանց սահմաններու, համերաշխ գործակցութեան մթնոլորտի մէջ:

Հեռացնել 32րդ եւ 33րդ յօդուածները՝ կը նշանակէ հեռացնել խախտումը մեր Աքռներու իրաւասութեանց սահմաններուն, կը նշանակէ հեռագրենել բուն պատմաբան տագմապին, որ քսան տարիներէ ի վեր կը պառակտէ ու կը տկարացնէ մեր եկեղեցւոյ մարմինը: Միայն հեռացումովը բուն պատմաբան՝ կրնանք հեռացնել նաեւ հետեւանքները:

Ահա քէ ինչու սրտանց կ'ողջունենք Ձեր նամակի յուսադրիչ ոգին եւ շինարար հաւաստիացումները եւ իրապէս կը հաւատանք որ այսօրուրիւ սկսուեալ եւ յետ աշտու բազում առիթներով, միատեղ պիտի կարողանանք զգալ ու ասլորիլ քաղցրութիւնը մեծ Սաղմոսեբցուի տեսիլքին. «Զի՛ բարի, զի՛ վայելուչ. զի բնակեն եղբարք ի միասին... անդ պատրաստեաց Տէր գորհնութիւն եւ զկեանսն յաիտենից» (Սաղմոս ՃԼԲ 1, 3):

Մայիսի 22ին Անթիլիասում Պատգամաւորական Ժողովին եւ ապա Մայիսի 29ին՝ օծման եւ այլ Հանդիսութիւններին Մայր Աթոռի պատգամաւորներին մասնակցութիւնը ջերմօրէն եւ որդիական երախտադիտութեամբ ընդունուեց ամէնուրեք՝ որպէս սրտադին ցանկութեան արտայայտութիւն անցեալի տխուր էջը փակելու եւ յոյսով նայելու ապագային՝ «չուտախոյժ կերպով վերացած տեսնելու տաղնապը» եւ ողջունելու վերահաստատումը, բազմալի միութիւնը սփռութիւն մեր ազգային-եկեղեցական կեանքի մէջ:

Արդարեւ, Մայր Աթոռի մասնակցութիւնը Անթիլիասի Հանդիսութիւններին, յոյս ներշնչող նախաձեռնութիւն էր, Հին վէրքերը բուժելու, ինչպէս նաեւ է նաեւ Բէյրութի օրաթերթերից մէկը. «Այսօր մօտիկ անդալի վէրքերը դարմանելու մղումով Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը իր մասնակցութիւնը կը բերէ Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան» («Ազգակ», Մայիսի 29):

Սփռութեամբ մասնուր նշանակէ գոհունակութեամբ ողջունեց Անթիլիասի Հանդիսութիւններին Մայր Աթոռի մասնակցութիւնը, որպէս ուրախութիւն իրադարձութիւն, դրական մի ազդանշան, որը յուսադրող Հեռանկարներ էր բացում սփռութիւն մեր եկեղեցւոյ ծոցում ծանօթ տաղնապի եւ երկիւղեղման բարեք եւ օրինական լուծման ճանապարհին:

Մայր Աթոռը Հաւատում է, որ իր այդ մասնակցութեամբ մի նոր էջ է բացուելու սփռութեամբ-Հայրենիք եկեղեցական յարաբերութիւններին մէջ:

Այո՛, Մայր Աքռը ուրախ սրտով, քաջ սրտով մասնակցեց եւ Պատգամաւորական Ժողովի ընտրական նիստին, եւ յաջորդ օրերի հանդիսութիւններին:

Մայիսի 22ին, Կիրակի օրը, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարում յատենի Պատգամաւորական Ժողովի խօսք է անում Տ. Տ. Թորէն Ա. Կաթողիկոսը եւ, խօսելով նաեւ Մայր Աթոռի ու Անթիլիասի յարաբերութիւններին բարեքման մասին, ասում է.

«Մեր խոր քաղաքներն է որ մօտիկ ապագային, Հայաստանեայց եկեղեցւոյ առջեւ քաջաւի լուսահեղ նախապարհ մը, որ երկու Արքունքը կարենան միասնաբար ծառայել հայ ազգին: Կոչ կ'ուղղենք յարգաւնեւար պատգամաւորներուդ եւ յառաջիկային գումարելի Ազգ. Ընդհանուր Ժողովի անդամներուն որ այս նամբուն վրայ խոչընդոտ հանդիսացող դժուարութիւնները — ի մասնաւորի 32րդ եւ 33րդ յօդուածներու հարց — վերացնեն եւ ամբողջական համերաշխութեան նամբան հարթեն»:

Այնուհետեւ Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ արձանագրում է Դիւանի կողմից Ժողովին ներկայացուած հետեւեալ առաջարկը՝ ի մասին երկու Աթոռների յարաբերութիւնների բարւոքման.

«Նկատի ունենալով նաեւ յատենի Պատգամաւորական Ժողովին Վեհափառ Հայրապետին կողմէ արտայայտուած բաղձանքը, եւ հիմնուելով վերջին Ազգային Ընդհանուր Ժողովին արդէն իսկ արտայայտութիւն դատած տրամադրութեանց վրայ, ազգային պատգամաւորական Ժողովը իր կարգին ջերմապէս կը թելադրէ իրաւասու Ժողովներուն եւ մարմիններուն, եւ մասնաւորապէս յառաջիկայ Ազգային Ընդհանուր Ժողովին, նպաստել Հայաստանեայց եկեղեցւոյ երկու Աթոռներուն միջեւ յամեցող տարակարծութեանց պատճառներու վերացման, ի մասնաւորի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 32րդ եւ 33րդ յօդուածներու յարուցած դժուարութեանց հարթումով»:

Մայիսի 29ին, Կիրակի օրը, Հոգեպարտեան տօնին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարում կատարուած է նորընտրի աթոռակից կաթողիկոս Գարեգին արքեպիսկոպոսի օժման հանդիսութիւնը, որին մասնակցում են նաեւ Մայր Աթոռի երկու պատգամաւորները:

Իր օժումից յետոյ Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից-կաթողիկոսը Իր անդրանիկ քարոզում նշում էր Իր ընտրութեան եւ օժման առթիւ հայ եկեղեցու ծոցում ստեղծուած «միասնականութեան քարեքաստիկ եւ յուսադրիչ երեւոյթը... յոյսի եւ ուրախութեան սրտապնդիչ զգացումներով կը գեղու սիրտը երբ կը տեսնեմ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան մասնակցութիւնը այս կաթողիկոսական ընտրութեան եւ օժման: Գեղեցիկ, պայծառ օր մըն է այս մեր եկեղեցւոյ համար...»:

Բոլորի սրտերում, աճէնքի հոգիների մէջ եւ չրթների վրայ արձապանում էին միութեան, համերաշխութեան եւ սիրոյ խօսքերը: Բոլորի ցանկութիւնն էր, որ այս առթիւ արտասանուած գեղեցիկ խօսքերը կեանքի վերածուեն, դառնան կենդանի գործ:

Իրօք յուզիչ եւ յուսադրիչ էին Անթիլիասի հանդիսութիւն երբ առթիւ Ամենայն Հայոց Հայրապետին եւ Կիլիկեան Աթոռի կաթողիկոսի միջեւ փոխանակուած գրութիւնների արտայայտութիւններն ու հաստատացումները: Յուզիչ եւ յուսադրիչ եղան նաեւ նոյն առթիւ Անթիլիասում արտասանուած ճառերն ու հայ մամուլի յօդուածները: Բայց այդ բոլորը կարող են օճառի պ'աչակի նման ցնդել, եթէ, ինչպէս Վեհափառ Հայրապետն է ասում, «հեռացուեն տաղնապի բուն պատճառները, քանի որ «միայն հեռացումովը բուն պատճառին կրնանք հեռացնել նաեւ հետեւանցները»: Իսկ տաղնապի բուն պատճառները պարզ է, որ հանդիսացան 32րդ եւ 33րդ յօդուածները եւ նրանց դորձագրումը Միացեալ Նահանգների, Պարսկաստանի եւ Յունաստանի էջմիածնապատկան թեմերից ներս:

Արդարեւ, մեր եկեղեցու եւ Մայր Աթոռի ծանր վիշտն էր արտա-

յայտում Տ. Սերոբյանի արքեպիսկոպոսի Մանուկեանը Բէյրութում, պաշտօնական մի տեսակցութեան առիթով, երբ, խօսելով 32րդ և 33րդ յօդուածներին մասին, շեշտում էր.

«Մեզ համար այդ յօդուածներուն վերացումը մեծ նշանակութիւն ունի: Կիլիկիոյ Աթոռի պատմութեան ընթացքին, յաճախ թիւրիմացութիւններ և տարակարծութիւններ ծագած են զայդ Աթոռներուն միջև: Բայց ոչ մէկ ատեն անոնք օրէնքի ուժ ստացած են, կանոնադրութեան մէջ չեն անցած: Վերջին անգամ այդ տարակարծութիւնները կանոնի վերածուեցան, նպատակ ունենալով Ս. Էջմիածինը տկարացնելու և Կիլիկիոյ Աթոռը դարձնելու արտասահմանի միակ կեդրոնը, ինչ որ կը հակասէ Հայց. եկեղեցւոյ սկզբունքներուն և կանոններուն» («Ազդակ», 1 Յունիսի):

Մենք համոզուած ենք, սակայն, որ մեր եկեղեցու և ժողովրդի կենսական ու մշայուն շահերը պիտի թելադրեն բոլորին անխտիր՝ վերականգնումը օրինականութեան, միութեան և շինարար գործակցութեան մեր նուիրապետական պատմական Աթոռների միջև, Աթոռներ, որոնք ամուր կանգնած պէտք է մնան հայրենի հողի մրայ խորսխուած Միածնի իջման վէժի մրայ:

Մայիսի 29ին, Երեկոյեան, պաշտօնական ընդունելութեան ժամանակ, Տ. Տ. Խորէն Ա. կաթողիկոսը «Իր անհուն ուրախութիւնն ու զոհոճակութիւնն» էր յայտնում հրապարակով նաև Մայր Աթոռի ներկայացուցիչների մասնակցութեան համար և ասում.

«...Դուք, գերաշնորհ և սիրելի ներկայացուցիչներ Ս. Էջմիածնի, փոխանցեցէ՛ք Ամենայն Հայոց Հայրապետին՝ Մեր Վեհափառ Եղբօրը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. կաթողիկոսին Մեր խոր շնորհակալութիւնը, Մեր եղբայրական ջերմ սէրն ու սրտագին բարեմաղթութիւնները իր առողջութեան և արեւշատութեան: Թող նորին Սրբութիւնը Հայց. եկեղեցւոյ շքեղ ծաղկումը միութեան ու միասնականութեան մէջ տեսնելու բարեբախտութիւնը ունենայ»:

Անթիլիասի հանդիսութիւններից յետոյ Մայր Աթոռ ժամանեց Տ. Ներսէս Եպս. Պօղոսյանը, որը անձամբ բերեց և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին յանձնեց Տ. Տ. Գարեգին Բ. աթոռակից-կաթողիկոսի 30 Մայիս թուակիր պաշտօնական գրութիւնը, որի մէջ ասուած էր.

«Ինչպէս հորէն Ա Վեհափառ Հայրապետը իր 2 Մայիս, 1977 թուակիր և 159/77 թուահամար նամակով կը յայտնէ, յառաջիկային խորհրդակցութեանց, բանակցութեանց մամբով, փոխադարձ սիրոյ, եղբայրութեան և յարգանքի մթնոլորտին մէջ, մեր եկեղեցիի գաղափարէն և սկզբունքէն առաջնորդուած, Մենք եւս կը յուսամք և Մեր գերագոյն կարելին ի գործ պիտի դնեմք որ փութով վերջ գտնեն տարակարծութիւնները և գործնական, սահուն և օգտակար արտայայտութեան մէջ մտնէ Հայց. եկեղեցւոյ միութիւնը՝ ի վառ Աստուծոյ, և ի բարին հայ ժողովուրդին»:

Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը իր Մայիս 29 թուակիր հեռագրով շնորհաւորում էր Տ. Տ. Գարեգին աթոռակից-կաթողիկոսի բնորութիւնը.

«Սրտանց շնորհաւորում ենք Գարեգին արքեպիսկոպոսի իրրեւ արդուակից՝ Չեզ Կիլիկեան Աթոռի: Հայցում ենք Աստուծոյ օրհնութիւնը և օգնականութիւնը Չեզի Սրբութեան և Գարեգին արքուակից-կաթողիկոսի առա-

ֆելուքեան՝ ի խնդիր մեր Մայր եկեղեցու միութեան եւ համայն հայ հաւատացեալ մեր ժողովրդի ազգային միասնութեան ամրապնդման: Սուրբ Էջմիածնից եւ վերածնունդ մայր հայրենիքից եղբայրական սիրոյ ողջոյն ամենաբարի մաղբաւնքներով:

Մայր Աթոռը դո՛ւ է, որ իր երկու ներկայացուցիչներով մասնակցեց Տանն Կիլիկիայի աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան եւ օծման հանդիսութիւններին:

Մայր Աթոռը նոյնպէս զոհոնակութեամբ արձանագրեց այդ առթիւ գրուած հաւաստագումները մեր եկեղեցական տաղնապալի կացութիւնների վերացման առնչութեամբ եւ ի մասնաւորի պաշտօնական խոստումները՝ ա՛յն մասին, որ չուսով կը ջնջուեն 32րդ եւ 33րդ յօդուածները Կիլիկեան Աթոռի կանոնադրութիւնից:

Մայր Աթոռը եւ մեր բովանդակ ժողովուրդը լաւատեսութեամբ ըստաւում են, որ խօսքերը կենդանի եւ շինարար գործի վերածուեն, առաջին հերթին վերացումովը 32րդ եւ 33րդ յօդուածների, որով միայն ցանապարհ կարող է բացուել հետագայ բանակցութիւնների, գործնական միջոցառումներով բուժելու հաւր քսան տարիների տագնապի բացած վէրքերը հայ եկեղեցու մարմնի վրայ:

Այս մտածումներով «Էջմիածին» ամսագրի խմբագրութիւնը ջերմօրէն շնորհաւորում է Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից-կաթողիկոսի ընտրութիւնը՝ մաղթելով Նրան քաջատղջութիւն, հայրապետական արդիւնաւէտ գործունէութիւն՝ իրականացնելու համար մեր եկեղեցական ու ազգային միասնականութեան վերաբերեալ բոլոր այն բարի մտածումներն ու սպասելիքները, որոնք նոյնպէս Իրենն են որպէս բարձրաստիճան հոգեւորականի եւ հայ մարդու: